



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ**

ք. Երևան

«01» մարտի, 2018 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 08-Ա/Ք

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎԱԾ
ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ
«ՀՀ ԿԳՆ ԳՊԿ - ՀՀՌՀ - 2018» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 18-ի № 1269-Ն որոշման հավելված 1-ի 12-րդ կետի 1-ին և 4-րդ ենթակետերով և հիմք ընդունելով «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ - ՀՀՌՀ - 2018» միջազգային մրցույթին ներկայացված գիտական ծրագրերի հայտերի գնահատման նպատակով ՀՀԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահի 31.07.2017թ. թիվ 40-Ա հրամանով ստեղծված մասնագիտական փորձագիտական խորհրդի նիստի 28.02.2018թ. թիվ 3 արձանագրությունը, ինչպես նաև հիմք ընդունելով Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի բյուրոյի 20.02.2018թ. նիստի թիվ ԵՇ №3(200) արձանագրությամբ հաստատված ցանկը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի կողմից անցկացված գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի աջակցության «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ - ՀՀՌՀ - 2018» միջազգային մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված գիտական ծրագրերի ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ - ՀՀՌՀ- 2018» միջազգային մրցույթի արդյունքում երաշխավորված գիտական ծրագրերի ֆինանսավորումն սկսել 2018 թ. մարտի 1-ից:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Լ. Մարդոյանին:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՑԱՆԿ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ - ՀՀՌՀ - 2018» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ

Հ/հ	Ծածկագիր	Ծրագրի անվանում	Ղեկավար	Գիտական կազմակերպություն
1	18RF-092	Քաղաքի բազմագենտային էկոլոգատնտեսական համակարգի կայուն զարգացումն ապահովող մոդելների, մեթոդների և ծրագրերի համալիրի մշակում՝ Հայաստանի Հանրապետության ք. Երևանի օրինակով	Սաղաթեյան Արմեն Կառլենի	ՀՀ ԳԱԱ էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոն
2	18RF-140	Գերբարձր լուծաչափի տվյալների կիրառմամբ լեռնային լճերի էկոլոգիական վիճակի գնահատման հեռազննման մեթոդի մշակում	Ասմարյան Շուշանիկ Գուրգենի	ՀՀ ԳԱԱ էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոն
3	18RF-126	Կոլիզիոն տիպի հրաբխականության յուրահատկությունների արտահայտումը Փոքր Կովկասի ֆյուիդային համակարգերի ձևավորման իզոտոպային-երկրաքիմիական և երկրաջերմային բնութագրերում	Մելիքսեթյան Խաչատուր Բորիսի	ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտ

4	18RF-090	Հայաստանի էոցենի միկրոբրածոների և լիթոֆացիայի համալիր ուսումնասիրությունը որպես հիմք հյուսիս-արևելյան Թեոխի պալեոաշխարհագրական և պալեոկլիմայական միջավայրի վերականգնման համար	Սահակյան Լիլիթ Հրանտի	ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտ
5	18RF-144	Ճանաչողության խնդիրներ մեծ թվով դասերի համար	Սահակյան Հասմիկ Արտեմի	ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ
6	18RF-061	Կոնտակտային փոխազդեցությունների մեխանիկայի, շփագիտության (տրիբոլոգիայի) և լարումների կոնցենտրացիաների տեսության ինտեգրալ հավասարումների լուծման մեթոդները	Հակոբյան Վահրամ Նասլետնիկի	ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտ
7	18RF-112	PPARP ինհիբիտորների նկատմամբ կայունության գարգացման մեխանիզմների ուսումնասիրությունը BRCA1 մուտացիաներից կախյալ ձվարանների քաղցկեղի ժամանակ	Առաքելյան Արսեն Արտաշեսի	ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ
8	18RF-034	Նուկլեոտիդային և օլիգոնուկլեոտիդային անալոզներից կազմված նանոհամալիրները որպես խոզերի աֆրիկյան ժանտախտի վիրուսի դեմ հակավիրուսային նյութեր	Զաքարյան Հովակիմ Սարգսի	ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ
9	18RF-120	Նոր ֆունկցիոնային նանոնյութերի ստեղծում՝ հիմնված ածխածնային պատիճով երկաթի միացությունների վրա բարձր էֆեկտիվությամբ չարորակ ուռուցքների մագնիսական գերտաքացման համար	Միրզախանյան Արմեն Ասպետի	ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ

10	18RF-139	Ոչ գծային նյութական ակտիվների քվանտային անցումը նանոկառուցվածքներով	Իշխանյան Արթուր Միքայելի	ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ
11	18RF-073	Ցածր մոլեկուլային զանգվածով պոլիիոնների միջև էլեկտրաստատիկ և ջրածնական փոխազդեցությունների հիման վրա ասիմետրիկ սինթեզի կատալիտիկ համակարգերի ծրագրավորում և կառուցում	Սաղյան Աշոտ Սերոբի	ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն
12	18RF-135	Հիմնարար բնույթի իոնային փոխազդեցությունների ուսումնասիրություններ ՄՄՌ- սպեկտրոսկոպիայի մեթոդով՝ իոնական հեղուկներում ածխաջրերի փոխակերպման նոր ուղիներ մշակելու նպատակով	Մամյան Սուրեն Սերյոժայի	ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն
13	18RF-114	Անցումային շարքի մետաղների կարբիդներն ու բորիդները որպես կատալիզատորներ հիդրոպրոցեսներում	Զուռնայան Ալինա Ռաֆիկի	ՀՀ ԳԱԱ Ա. Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտ
14	18RF-083	Կոմբրետաստատին A-4-ի ցիս-նմանակների սինթեզը և հակաուռուցքային ակտիվության ֆոտովերահսկումը	Մարկոսյան Աշոտ Իշխանի	ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն
15	18RF-091	Ձկնային հանրույթի խտության և աբիոտիկ հատկանիշների փոփոխության ազդեցությունը լիմնոհամակարգի էկոլոգիական վիճակի և սննդային ցանցերի ձևավորման վրա ՀՀ խոշոր բարձրադիր Սևանա լճի օրինակով	Գաբրիելյան Բարդուխ Կառլենի	ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն

16	18RF-075	Ասիայի խոշորագույն լճերի՝ Բայկալի և Սևանի պլանկտոնի միկրոբային հանրույթի բազմազանության համեմատական վերլուծություն տրոֆիկ վիճակի և ջրի մակարդակի տարուղղված փոփոխության պայմաններում	Գևորգյան Գոռ Արտակի	ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն
17	18RF-105	Իժերի թույնի դեզինտեգրիներին կարգավորիչ ակտիվությունը ինտեգրիներին վրա ուռուցքային բջիջների անկանոն աճի և տրոմբոցիտների ազդեցացիայի ժամանակ	Այվազյան Նաիրա Մարտինի	ՀՀ ԳԱԱ Լ. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտ
18	18RF-010	Ժամանակակից երիտասարդությունն էթնո-տարածաշրջանային տեսանկյունից. սոցիալ-ժողովրդագրական և էթնոմշակութային կողմնորոշումները (Հայաստանի և Ռուսաստանի օրինակով)	Կարապետյան Ռուբեն Սուրենի	ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
19	18RF-142	Ռենտգենյան և սինքրոտրոնային ճառագայթման բնութագրիչների ժամանակային և տարածական կառավարման մեթոդների կատարելագործումը ռենտգենյան ճառագայթների դիֆրակցիայի ուսումնասիրման հիման վրա	Քոչարյան Վահան Ռաշիդի	ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ
20	18RF-096	Երկրի գլխավոր մագնիսական դաշտի և իոնոսֆերային Տզ հոսանքային համակարգի դինամիկայի ուսումնասիրությունը մագնիսական դիտակայանների տվյալների վերլուծության նոր մեթոդների կիրառմամբ	Սիմոնյան Անահիտ Հովհաննեսի	ՀՀ ԳԱԱ Ա. Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ

21	18RF-033	Սևանա լճի և դրա ջրատարածության համալիր ուսումնասիրություններ վերջին հազարամյակների կլիմայի և շրջակա միջավայրի փոփոխությունների վերակառուցման նպատակով	Հայրոյան Սարգիս Հրաչիկի	ՀՀ ԳԱԱ Ա. Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ
22	18RF-039	Հանգույցների տեսություն և մատրիցական մոդելներ	Սեդրակյան Արա Գրիգորի	Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա
23	18RF-015	Փոքր մեքենաների թերմոդինամիկա՝ էֆեկտիվությունը և ադապտացիան ֆիզիկայում և կենսաբանությունում	Ալլահվերդյան Արմեն Էդուարդի	Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա
24	18RF-094	Ծանր մետաղներով հարստացված սցինտիլյացիոն բյուրեղների ճառագայթահարման կայունության ուսումնասիրում	Ավետիսյան Ալբերտ Էդուարդի	Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա
25	18RF-109	Կոմբինատոր մեթոդներ և ալգորիթմական հարցեր խմբերի տեսությունում	Աթաբեկյան Վարուժան Սերյոժայի	Երևանի պետական համալսարան
26	18RF-019	Ստոխաստիկ մոդելներ ոչ հստակ պատահական բազմություններով	Օհանյան Վիկտոր Կարոյի	Երևանի պետական համալսարան
27	18RF-002	Կոնֆորմ համաչափությունը դասական և քվանտային ինտեգրվող համակարգերում	Ներսեսյան Արմեն Պետրոսի	Երևանի պետական համալսարան

28	18RF-020	Տերպենիլ-1,2,3-Տրիազոլներ	Ղոշիկյան Տարիէլ Վլադիմիրի	Երևանի պետական համալսարան
29	18RF-132	Ժայռային մողեսների միջտեսակային հիբրիդների մեյոզի ուսումնասիրությունը և դրանց վերարտադրության ռազմավարությունը	Առաքելյան Մարինե Սեմյոնի	Երևանի պետական համալսարան
30	18RF-045	Ռուսաստանի և Հայաստանի բարձրլեռնային լճերի էկոհամակարգերի էվոյուցիայի ուսումնասիրության պալեոլիմնոլոգիական ասպեկտը	Գաբրիելյան Իվան Գեորգիի	Երևանի պետական համալսարան
31	18RF-077	Հողերի աղտոտվածության հետ կապված էկոլոգիական ռիսկերի գնահատումը և դրանց ռեմեդիացիայի նորարարական մեթոդները	Ղազարյան Կարեն Արամայիսի	Երևանի պետական համալսարան
32	18RF-118	Օպտիկապես անիզոտրոպ նյութերով լայն սպեկտրալ տիրույթում ստատիկ և փոխանջատվող դիֆրակցիոն օպտիկական տարրեր՝ տեղեկատվական հաղորդակցության համակարգերի համար	Մարգարյան Հակոբ Լևոնի	Երևանի պետական համալսարան
33	18RF-074	Դոնի հայկական համայնքը նորագույն շրջանում. պատմություն, ինստիտուտներ, ինքնություն	Մինասյան Էդիկ Գարեգինի	Երևանի պետական համալսարան

34	18RF-108	Մոսկվայի հայկական սփյուռքի ձևավորման և զարգացման առանձնահատկությունները XX դ. վերջին և XXI դ. սկզբին	Եղիազարյան Արման Սամվելի	Երևանի պետական համալսարան
35	18RF-106	Ասիմետրիկ շերտավոր ամրավորում պարունակող պոլիմերային նանոկոմպոզիտների առաձգական հատկությունների մոդելավորումը	Սարգսյան Արմենուհի Հակոբի	Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան
36	18RF-004	Նոր ֆունկցիոնալ տարածությունների դասեր և սինգուլյար օպերատորներ	Կարապետյան Գառնիկ Ալբերտի	Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան
37	18RF-017	Տրոպոսֆերայի բարակ շերտային կառուցվածքի ակուստիկական խորազննումն իմպուլսային դետոնացիոն գեներատորի միջոցով	Բարսեղյան Ռազմիկ Նահապետի	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան
38	18RF-116	Նոր նյութերի և տեխնոլոգիաների մշակում և հետազոտում մոտակա և միջին ինֆրակարմիր տիրույթի հեռանկարային օպտիկական սենսորային միկրոհամակարգերի համար	Կոկանյան Էդվարդ Պիերի	ԻՍ. Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան
39	18RF-003	Ավագ դպրոցի սովորողների քաղաքացիական կոմպետենտության ձևավորման մոդել	Գասպարյան Անահիտ Մովսեսի	Կրթության ազգային ինստիտուտ

*Ռուսաստանյան համադեկլարանների և կազմակերպությունների համար տե՛ս http://www.rfbr.ru/rffi/ru/rffi_contest_results/o_2057141